

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարադաշտայինը գրվում են ուղղակի
Тифлиса. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻՆԿՈՒՄ 1883 ԹԻՒՆ

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրօգրամայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋԻՆԿՈՒՄ ԶՅՈՒԹԻՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիտօն, վէպեր, ինքնաբերական յօդուածներ, դիտարկումներ ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՅԱՆՈՐԳԱԳԻՆ: Տարեկան 10 ռուբլի, միջ ամսվայ 6 ռուբլի, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլի: ՀԱՏՈՎ համարները 5 կոպեկ: ՀԱՍՑԵՆ. Тифлиса, редакция «Мшак»:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Հրատարակական անտարբերութիւն:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեսներ, Նամակ Զաքարիայի: Նամակ Արաքսայի: Նամակ Մօզո-կից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թղթակցութիւններ: Ներքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ:—ԿԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Մեր քաղաքային ընտրութիւնների ժա-մանակ ընտրողները առհասարակ շատ քիչ թւով են ներկայանում ընտրութիւններին:

Այս տարի, օրինակի համար, առաջին բաժնում, 60 ընտրողներից միայն 35 հոգի էին մասնակցում ձայնաւորների ընտրու-թեանը, երկրորդ բաժնում, մօտ 250 ըն-տրողներից միայն 103 ձայն տուողներ ներ-կայ էին գտնվում ընտրողական ժողովին:

Եթէ ժողովուրդը, ընտրողների մեծամաս-նութիւնը դժգոհ է իր խնամքիցնայից և նրա գործունէութիւնից քաղաքային գործե-րի ասպարիզում (և ճշմարիտն ասած պատ-ճառ էլ ունի, մեր կարծիքով, դժգոհ լի-նելու), եթէ դժգոհ է քաղաքի դուռնայից, ուսարկայից, եթէ կարծում է որ մեր քա-ղաքային գործերի վարողները, առհասա-րակ, աւելի աչքի առած ունեն իրանց անձ-նական շահը, քան թէ ընդհանրութեան օգուտը,—ի՞նչի այն ժամանակ բոլոր ըն-տրողները չեն գալիս, չեն ներկայանում, չեն մասնակցում ընտրութիւններին, որպէս զի իրանց ուզած անձերին ընտրեն:

Տրանջալ, դժգոհ լինել, բայց դործ չը կատարել, դործի մէջ չը մտնել, երբ իրա-ւունք է տուած դործ կատարելու,—դա վերին աստիճանի աններելի անտարբերու-թիւն է հասարակութեան կողմից:

Եթէ հասարակութիւնը համոզված է որ ոչ քաղաքային գործերը, ոչ էլ որ և է այլ հասարակական հիմնարկութիւն չը պէտք է թողնել մի որ և է նեղ կուսակցութեան, ազգականութեամբ, խնամութիւններով, փո-խադարձ նիւթական շահերով կապված

մարդկանց մի որ և է նեղ շրջանի ձեռքում, այլ պէտք է աշ

ներ ունի, բայց իր պարտականութիւնները մասին ասվածները չէ կամենում լսել:

Իրաւունք առանց պարտականութեան չէ կարող լինել և որքան մեծ է իրաւունքը, նոյն չափով էլ մեծ է լինելու և պարտականութիւնը: Նոյնպէս և անհրաժեշտ է որ հասարակութիւնը, եթէ չստանք լիովին, գոնէ բաւականին հասկացողութիւն ունենայ այդ առարկայի վերաբերութեամբ:

Սակայն մեր հասարակութիւնը ունի արդեօք այդ տեղեկութիւնները—քաւ լիցի: Մասներով կարելի է հաշուել այն մարդկանց, որոնք կարողանում են զանազան միջոցներով ծխական, միջնակարգ և մինչև անգամ թեմական դպրատները: Գործնից առաջանում է այն, որ շատերը անբաւական են լինում թէ ինչի մեր (ծխական) ուսումնարանը չէ կարող այնպէս աշակերտներ պատրաստել ինչպէս Ալեքսանդրօպօլի ուսումնարանը, պատահել են և այնպիսիներ, որոնք մատնացոյց են արել Ներսիսեան դպրանոցի վրա: Մի քանիսն էլ լսել են, որ ամենաբարձր ուսումը համալսարաններումն է ստացվում, վստահօրէն մշտապես մի պատրուակ են գտել ուսումնարանին չօգնելու, համարադրական ուսուցիչներ բերելու՝ այդպէս են ասում նրանք, ինչ է մի քանի կօպէլ նուէր պէտք է տան, չէն մնաք: Պէտք է ասած՝ որ մինչև ուսուցչ. ընդհ. ժողովից ուսումնարանաց պարագմանց ծրագիր կազմելը, իւրաքանչիւր ուսումնարանի պարագմանց ծրագիրը կարող էր բաւականին զանազանօրէն իր նմաններից, օր. Մի միջնակարգ ուսումնարանի ծրագիրը կարող էր աւելի ընդարձակ լինել X-ի ուսումնարանից, նոյնպէս և լինում էր ծխականներին: Ախարաւաքի ուսումնարանը լաւ ծրագիր է ունեցել, իբրեւ ապացոյց մէջ եմ բերում հետեւեալը: Տեղւոյս սր. Սանդիտեան օրիորդական ուսումնարանի բարձր պատրաստական դաստիարակ, Ն. քոյրերը տեղափոխվելով Թիֆլիս, ուղղակի ընդունվել էին Մարիամեան—Յովնանեան օր. ուսումնարանի առաջին դաստիարակ:

Մեր նորընտիր հոգաբարձութիւնը սորանից մի քանի օր առաջ, եռանդուն միջոցներ գործ դրեց աշակերտներից թողնակադրամն հաւաքելու:

Մեր քաղաքակիցներից շատերը սովորութիւն էին արել որովորեւ լեցնել ուսումնարան և հէնց որ թողնակադրամը պահանջվում էր, այնքան խաւթում էին հոգաբարձութեանը մինչև մի կամ երկու ամիս կը մնար հաղթաբանութիւններին, այն ժամանակ որովորեւ էլ չէին ուղարկում ուսումնարան: Գործնով են բացատրվում 100-աւոր բուրժուներով նիսիաները, որ իւրաքանչիւր տարի գրվել են հոգաբարձական մատենի մէջ:

Ան աշխարհի դէպքերին մի անգամ ընդմիջտ վերջ տալու նպատակով, հոգաբարձութիւնը պատւիրեց աշակերտներին, հետեւալ օրը բերել որոշեալ թողնակադրամը և երբ ոչինչ չը ստացվեցաւ, հոգաբարձութիւնը կամեցաւ քաղաքացիներից ժողով կազմել և խօսել այդ հարցի մասին: Չը նայելով կրկնակի հրաւերներին, ոչ ոք չեկաւ:

Եւ դարմանալի էլ չէ. քաղաքին 600 տուն բնակիչներից 150-ը փող են պարտ ուսումնարանին 6,000 ռուբլի, էլ պարտք ունեցողները կը գան: Տեսնելով, որ այդ չափովկեցաւ, հոգաբարձութիւնը արձակեց բոլոր փող չը բերող աշակերտներին, այնպէս որ տղայոց ուսումնարանին 120 աշակերտներից հազիւ 40-ը մնացին: (Այժմ կրկին հաւաքվում են, 100-ի չափ արդէն եկել են): Փողոցում շշուշ լարձաբացաւ, անդործ ախարաւաքցոյց համար վիճարանութեան ասպարէզ բացվեցաւ, նրանցից շատերը անկիւնները քաշված սկսեցին յարձակվել ուս. վարչութեան վրա, իսկ հրապարակի վրա մնացին մի խումբ հմուտ բերաններ: «На безрыбье и ракы рыба»—ծուկ չեղած տեղը խեցեղեղին էլ ձուկ է, ասում է ուսական ասածը. ի հարկէ երբ ձայն ունեցող անձինք անկիւնները քաշվեն, ասպարէզը դրանց պէտք է մնայ:

Եւ դրանք գոնէ քաղաքավարի խօսէին, բայց ինչ անեն խեղճներ, որ չեն սովորել: Եւ ահա մեր պարտնեղ սկսում են յարձակվել աշ և աշեան, որոնց համար դրանց մի քանի ամսով կարելի էր մեծարել բանտում...

Հոգաբարձութիւնը առանց ուշադրութիւն դարձնելու դրանց վրա, առաջ տարաւ իր սկսածը: Մանաւանդ լաւ էր, որ աղաների տղայոցն էլ հաւատարմապէս արձակեցին, որովհետեւ մինչ ցայժմս որքան հաւատ են ընծայ

իրեր, որոնք Մանկունու սեփականութիւն, ի հարկէ, չեն կարող համարվել: Այս ինչ է ասում լրագրիւր: Վսյդ պահարանների միջի իրերը մեծապէս հանդերձեղնների կտորներ էին, կրօնատրի հաղնիքը, արծաթեղէն, ոսկեղէն դարձեր, դրձեր, ասեղնագործ սեղանի տիւղներ, որոնք կարող էին լինել սեփականութիւն ամեն մի հարուստ հողեռականի, կաթնոլիկոսից սկսած: Բոլոր հասարակութիւնը վկայեց միաձայն թէ Վահրամ կպիւս. Վհհա-փառի ծանր դրուկները ինկատի առնելով, պարտաւոր էր նախ ոչ մէկ բան չը շարժել վհհարանից, իսկ երկրորդ՝ եթէ կամենում էր իր սեփականութիւնը աշխիւն իսկ անպատճառ ուղարկել Կ. Պոլիս, պէտք է անէր այդ գիտութեամբ Սինօ-ղի, զրաւոր վկայականով ստուգված: Արեւելիքի մէջ երեւցան նաև Վհհ. Հայրապետի զիւանստան գործերը, պաշտօնական անձանց գրութիւններ, նամակներ, պ. Սանասարեանից ուղարկված ստիկոսարեր կուպօնների հաշիւներ, վանքական դանաղան թղթեր, ինչպէս հանգուցեալ Գաբրիէլ Այվազովսկու ձեռագիր աշխատութիւններից պատմութիւն Գեորգեան ճեմարանի, Հոգեբանութիւն, նամակագրէ և այլ հեղինակների մի քանի անտիպ գրուածներ: Այդ բոլորը Վահրամ կպիւս-կոպտա Մանկունու սեփականութիւնը չը լինելը, բացի անձնական նամակներից, որոնք խառն էին միւս թղթերի հետ, բոլոր հանդիսականը առանց բացառութեան վկայեցին:»

Կիրակի, նոյեմբերի 14-ին Արծրունու թատրոնում հայ դերասանական խումբը տուեց առաջին ներկայացումն է ժան Գրամ Գրեմոնի: Գրեմոն է Ժան Գրեմոն և այդպիսով թատրոնը ամբողջին մասշտիբի դարձնելու միտքը կատարելապէս աշուղ-վեցաւ, որովհետեւ թատրոնը գրեթէ լիքն էր: Ե-ժան Գրեմոն տոմսակները գրեթէ բոլորը ծախված էին: Մենք խորհուրդ կը տայինք դերասանական խումբին, եթէ միջոց կայ, աւելի է Ժան Գրեմոնի գինը: Կիրակի օրվայ ներկայացման գիներով ամբողջ եկամուտը 350 բուրջուց աւելի է, եթէ 50 բուրջու ևս պակասացնին գինը, զորքը աւելի աշուղ կարող է գնալ:

Բժշկապետ, պրոֆէսոր Շիթեանց ինդրում է մեզ յայտնել, որ նա Վկայաւ Զիւրաբեանցի ան-ցաւ ուրիշ բնակարան, այն է Գոլովինսկի պրո-պէկտի վրա, Շիթեան տուն, այն բնակարանը, որ-տեղ դեռեղված է պ. Երմակովի ֆոտոգրաֆիան: Բժշկապետը շարունակում է առաջվայ պէս ըն-դունել հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 11 1/2 ժամ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻԱ

Կ. Պոլիսի «Հայրենիք» լրագրի մէջ կար-դում ենք հետեւեալ եղեռնագործութեան մասին, որ կատարվեցաւ Մուշի մէջ:

«Վանէն ռուսիացի մը կը հեռագրէ տե-ղիս անդիլերէն լրագրին, թէ Մէհմէտ Ալի անուն հուսակաւոր աւազակապետին եղբայ-րը ուղեր է Բաղէշի կառավարիչը սպանել, սակայն ձերբակալվելով բանտարկվեր է: Մէհմէտ Ալի իր եղբայրը ազատելու համար իր խնդով Մուշի բանտին վրա յարձակեր, սակայն պահապանը ժամանակին իմանալով, աւազակը վաներ են, բանտարկեալ եղբայրը բանտին մէջ սպանվեր է: Մէհմէտ Ալի իր վրէժը լուծելու համար Մուշի շրջակայները զանվող երեք հայ գիւղերու վրա յարձա-կեր և զանոնք կոզոպտելով գիւղացիները սպաներ, շատ մը կիներ և կոյսեր լլկեր և փախեր է: Չը մոռնանք բնելու թէ յիշեալ Մէհմէտ Ալի եղբոր գիւղը զուրա հանե-լու համար երկրորդ անգամ Մուշի բանտին վրա յարձակեր, զուրա հաներ և բանտա-պաններն ալ ձերբակալելով քիթերն և ա-կանջն ին կտրեր է:»

ԵԳԻՊՏՈՍ

Արաբի-փաշա իր բանտից Կայրէի մէջ գրեց հետեւեալ նամակը «Times» լրագրին երկրպագական ապստամբութեան մասին:

«Պարօն. «Զեկայի» լրագրի № 1105-ի մէջ «Երկրպագական ապստամբների կախա-ւորում» վերնագրով մի յօդուած կարդաց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ ներկայ նոյեմբերի 20-ին
նշանակված է երկրորդ անգամ աճուրդ
հոկտեմբերի 28-ին չը կայացածի տեղը կա-
պալով տալու համար տուրքերը քաղաքա-
յին սպանդանոցի մէջ անասուններ մորթե-
լու համար: Աճուրդին մասնակցել ցանկա-
ցողները կարող են տեսնել պայմանները
վարչութեան գրասենեակի մէջ առաւո-
տեան 9 մինչև 2 ժամը:

1—3

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ

Հինգշաբթի, նոյեմբերի 18-ին, Հայե-
րէն ներկայացումն

ՅՕԳՈՒՏ Պ. ԱՒԱԼԵԱՆԻ

Առաջին անգամ

ՊԱՏԻԻ ԵՒ ՓՈՂ

Կօմ. 5 արար. թարգ. Պ. ՉՄԵԿԵԱՆԻ

Գերասանական խումբը պատրաս-
տում է

ՍԻՐՈՅ ՓՈՒՍԵՐԷՆ ՍԵՐ

Հեղ. Ֆ. ՇՊԻԼԱՅԵՆԻ

2—3

ԾԱԽՎՈՒՄ Է ՏՈՒՆ ԱԿԻՈՎ-
սկայա փողոցի վրա, պոլիցիական 5 բաժնի
մէջ: Տունը երկու ՅԱՐԿԱՆԻ է երեք սենեակ-
ներով, խոհանոցով և բազմ: Գնի մասին
տեղեկացաւ վարչութեան կողմէն Նաբերեժնայա
տուն № 13 տան տիկնոջից:

(5) 3—3

Ծախվում է ԵՐԿՈՒ ՅԱՐԿԱՆԻ
ՏՈՒՆ № 13, որ նայում է վարչութեան
սկայա Նաբերեժնայա և վարչութեան
փողոցների վրա: Վերին յարկում կան 8
ՍԵՆԵԱԿՆԵՐ խոհանոցով, ներքին 5
սենեակներ, խոհանոց և ծառաների սե-
նեակ: Գնի մասին հարցնել նոյն տեղը տան
տիկնոջից: Նոյն տեղը ծախվում է ԴԱ-
ՏԱՐԿ ՏԵՂ:

(5) 3—3

Թեմական վերատեսչի թոյլտուութեամբ
Հալաբարում բացվեցաւ Ս. Գրիգոր Լու-
սաւորչի եկեղեցու Ս. Հովհաննէս անու-
նով օրիորդական ուսումնարանը, որը գտն-
վում է Էջմիածնեցու եկեղեցու հանդէպ
տիկին Նազարեանցի տանը (որ առաջ դէ-
պօ էր): Սրանով հաղաբարձութիւնը յայա-
նում է յարգելի հասարակութեանը, որ ա-
շակերտուհիների ընդունելութիւնը սկսել
է ներկայ նոյեմբերի 12-ից. իսկ հանդիսա-
ւոր բացումը իր ժամանակին կը յայտա-
րարվի լրագրներում:

Հոգաբարձուք. Սարգիս Եղիշարեան, Աղա-
սի Մէլիք-Ա. Սիմոնեանց, Գէորգ Թարևանեանց:

ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է,
որ կիրակի, նոյեմբերի 21-ին, առաւօտեան
10 ժամին Արծրունու թատրոնում կը կա-
տարվին երրորդ կարգի ձայնավորների ըն-
տրութիւնները:

1—3

ԹՈՒՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ
սիստեմատիքական ընթացք

Գրիգորի վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար
մասն առաջին (ամբողջ թուեր)
Մամուլի տակից լոյս տեսաւ նոյն խնդր-
ների երկրորդ մասը (կոտորակ թուեր
և երրորդական կանոններ):

Գինն է 40 կօպ.

Ուսումնարաններին զիջումն 20%:
Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական
գործակալութեան խանութում:

Օտար տեղերից գինում են այս հասցեով
Тифлисъ, въ Агентство В. Шавердо-
ва:

Տրվում է ՎԱՐՁՈՎ մի լոյս ՍԵՆԵԱԿ
մեքենայի, վառելիքայտով, սամովարով
և ծառայողի ամսական 12 րուբլով:
Կուկիայում, իսարովսկայա փողոց, տուն
№ 9, ներքին յարկում:

ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМ-
НАТА съ мебелью, отопленіемъ,
самоваромъ и прислугою за 12
р. въ мѣсяцъ. Куки, Исарлов-
ская улица, домъ № 9, нижній
этажъ.

4—10